ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 1
ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Ա.Հովսեփյանի մոտ կայացած խորհրդակցության

11.02.2019թ. ք.Վանաձոր

Մասնակցում էին՝
ՀՀ Լոռու մարզի զբաղվածության աջակցության մարզային հանձնաժողովի անդամները, հրավիրյալներ և ՋԼՄ-ների ներկայացուցիչներ:

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. ՀՀ Լոռու մարզպետի 2019թ. փետրվարի 5-ի թիվ 45-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ Լոռու մարզային զբաղվածության հանձնաժողովի կազմի ներկայացում:
/Զեկ.՝ Հանձնաժողովի նախագահ Արշակ Հովսեփյան,
Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյան /
2. ՀՀ կառավարության 17.04.2014թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված Հավելված 21-ի՝ վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովման կարգի պահանջների ներկայացում:
/Զեկ.՝ Հանձնաժողովի նախագահի տեղակալ Արա Առաքելյան,
Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյան/
3. 2019թ. Զբաղվածության ամենամյա «Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովում» ծրագրի շրջանակում ՀՀ Լոռու մարզին հատկացված ծրագրերի մասին /ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 21.01.2019թ. գրությունը/:
/Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյան/
4. Համայնքներից ներկայացված ծրագրերի քննարկում:
/Զեկ.՝ Հանձնաժողովի նախագահի տեղակալ Արա Առաքելյան/
5. Այլ հարցեր:

Ո ր ո շ ե ց՝

Հաստատել հետևյալ ծրագրերը՝

1. Ազնվաձորի համայնքապետարան. «Գերեզմանների ցանկապատում և տարածքի բարեկարգման աշխատանքներ», իրականացման ժամկետը՝ 02.04.2019թ. – 30.06.2019թ.

2. Դարպասի համայնքապետարան. «Մանկապարտեզի խաղահրապարակի կառուցման և բարեկարգման աշխատանքներ», իրականացման ժամկետը՝ 01.04.2019թ. – 30.06.2019թ.

3. Ձորագյուղի համայնքապետարան. «Թիվ 1 գերեզմանատան պատի վերանորոգման և տարածքի բարեկարգման աշխատանքներ», իրականացման ժամկետը՝ 01.04.2019թ. – 31.05.2019թ.

4. Գեղասարի համայնքապետարան. «Բնակչության սոցիալական պաշտպանության /ծիսակատարությունների և հանդիսության սրահ/ հաստատության վերանորոգում և տարածքի բարեկարգում», իրականացման ժամկետը՝ 02.05.2019թ. – 31.07.2019թ.

5. Ալավերդու համայնքապետարան. «Ալավերդի համայնքի գերեզմանատան ցանկապատում», իրականացման ժամկետը՝ 15.05.2019թ. – 15.08.2019թ.

6. Լոռի Բերդի համայնքապետարան. «Լոռի Բերդ համայնքի Հովնանաձոր բնակավայրի գերեզմանատան ցանկապատում և Ագարակ, Յաղդան, Կողես բնակավայրերի պուրակների բարեկարգում և կառուցում», իրականացման ժամկետը՝ 01.04.2019թ. – 01.06.2019թ.

7. Գյուլագարակի համայնքապետարան. «Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ բնակավայրի գերեզմանատան ցանկապատում և բարեկարգման աշխատանքներ», իրականացման ժամկետը՝ 03.06.2019թ. – 30.08.2019թ.

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց՝

1. Հանձնաժողովի նախագահի տեղակալ Արա Առաքելյանին՝

ա/ Հանձնաժողովի կողմից հաստատված ծրագրեր ներկայացրած համայնքների հետ ճշտել ծրագրերի անվանումները և իրականացման հստակեցված ժամկետները:

/ժամկետ՝ 2019թ. փետրվարի 13-ը/

2. Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյանին՝

ա/ ՀՀ կառավարության 17.04.2014թ. թիվ 534-Ն որոշման պահանջներին համապատասխան /հավելված 21/ սահմանված ձևաչափով հաստատված ծրագրերի ժամանակացույցը ներկայացնել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

/ժամկետ՝ 2019թ. փետրվարի 14-ը/

բ/ Ներկայացնել ՀՀ Լոռու մարզպետի որոշման նախագիծ՝ 2019թ. համար հաստատված «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրերի ըստ համայնքների՝ ֆինանսական միջոցների բաշխման, ծրագրերի ուղղվածության և դրանց կատարման իրականացման և ծրագրերի ներկայացման վերջնաժամկետների ժամանակացույցը:

/ժամկետ՝ 2019թ. փետրվարի 15-ը/

գ/ ՀՀ Լոռու մարզպետի որոշումով 2019թ. համար հաստատված «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրերի ըստ համայնքների՝ ֆինանսական միջոցների բաշխման, ծրագրերի ուղղվածության և դրանց կատարման իրականացման և ծրագրերի ներկայացման ժամանակացույցը տրամադրել մարզի զբաղվածության տարածքային կենտրոններին և համայնքներին:

/ժամկետ՝ 2019թ. փետրվարի 20-ը/

3. Մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Հրայր Հակոբյանին՝

Ապահովել աշխատանքի և զբաղվածության բնագավառում իրականացվող ծրագրերի մասին հանրային իրազեկումը՝ աշխատանքներին ներգրավելով մասնակից կողմերին /գործընթացի կազմակերպիչներ, շահառուներ/:

/Տարվա ընթացքում/

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՐՇԱԿ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Կազմեց՝ Հանձնաժողովի քարտուղար Վ.Ջաղինյանը /2-33-99/